ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Ա/Ձ Սմբատ Ենոքյան-ն ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2025/10 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	Մաքսային մարմնի արական սեռի հանրային ծառայողի ներկայացուցչական վերնաշապիկ Մաքսային ծառայության գեներալ-լեյտենանտի, գեներալ-մայորի, գնդապետի, փոխգնդապետի ու մայորի կոչումներ ունեցող մաքսային մարմնի հանրային ծառայողների ներկայացուցչական վերնաշապիկը (Նկար 6) սպիտակ (գունային կոդը՝ 11-0601TPG) կտորից է: Ձևվածքն ունի ուղիղ ուրվագիծ: Առաջամասում կոճկվում է 7-10 սպիտակ (գունային կոդը՝ 11-0601TPG) պլաստմասսայե կոճակով (ըստ չափ/հասակի): Օձիքը՝ հետ ծալվող, կրծքամասի ձախ հատվածում՝ 14 սմ լայնությամբ և 15 սմ երկարությամբ վրադիր գրպան՝ շերտակարով, հետնամասը՝ վերին կտրվածքով, թևքերը՝ երկար, երկուական սպիտակ (գունային կոդը՝ 11-0601TPG) պլաստմասսայե կոճակով կոճկվող հետ ծալվող թեզանիքներով: Օձիքի միացման կարի տակ՝ պիտակ (Նկար 87): Վերնաշապիկի կտորը՝ 33 տոկոս վիսկոզի և 67 տոկոս Պ/Է խառնուրդ՝ 175 գր/քմ ±5% խտությամբ: ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ * Մատակարարված ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Մատակարարը իր միջոցներով և իր հաշվին: ** Յուրաքանչյուր համազգեստի վրա պետք է լինի համապատասխան պիտակ, որի վրա պետք է նշված լինի կտորի կամ գործվածքի բաղադրությունը (տոկոսային հարաբերակցությամբ) և ապրանքի խնամքի առանձնահատկությունները (պատկերների կամ մակագրությունների տեսքով): *** Յուրաքանչյուր ապրանք պետք է ունենա առանձին փաթեթավորում, որի վրա պետք է նշված լինի անվանումը, չափսը, արտադրողի անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: **** Յուրաքանչյուր համազգեստի այն տեսակը, որի վրա առկա է կոճակ պետք է ունենա միևնույն կոճակից մեկական պահեստային օրինակ, որը պետք է ներսի կողմից

	պիտակով ամրացած լինի տվյալ համազգեստին: ***** Յուրաքանչյուր չափաբաժնով նախատեսված ապրանք, ըստ սեռերի, չափսերի և/կամ կոչումների, պետք է տեղադրված լինի առանձին ստվարաթղթե արկղերում: ****** Մատակարարը ապրանքի մատակարարումից առաջ պետք է համաձայնեցման ներկայացնի յուրաքանչյուր ապրանքատեսակից մեկ օրինակ որպես նմուշ՝ արտաքին տեսքը համաձայնեցնելու նպատակով: Հաստատված նմուշը հանդիսանում է պայմանագրով սահմանված քանակի մաս: Նմուշի հետ համատեղ՝ մատակարարը պարտավոր է ներկայացնել արտադրման համար օգտագործված բոլոր նյութերի նմուշները՝ ամրացված Ա4 չափի գծագրական թղթի (ստվարաթղթի) վրա: Ներկայացված նմուշները ստորագրում է Մատակարարը, որոնք հաստատվում կամ մերժվում են մասնագիտական խմբի կողմից՝ ներկայացնելուց ոչ ուշ քան երկու աշխատանքային օրվա ընթացքում: ******* Մաքսային մարմնի հանրային ծառայողների կոչումների քանակը, համազգեստի և բաղկացուցիչ պարագաների չափսերը, լրացուցիչ կտրամադրվեն պատվիրատուի կողմից՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը, Մատակարարի էլ.փոստին ծանուցում ուղարկելու միջոցով: ******** Մանրամասների համար օգտվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 8-ի «Մաքսային մարմնի հանրային ծառայողի համազգեստի ձևը սահմանելու մասին» N 1910-Ա որոշման դրույթներից, որում ներառված են յուրաքանչյուր չափաբաժնի տեխնիկական բնութագրում համապատասխան համարնով նշված նկարները, ինչպես նաև համազգեստի բաղկացուցիչ մաս կազմող մաքսային մարմնի հանրային ծառայողի տարբերանշանների տեխնիկական բնութագրերը:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

индивидуальный предприниматель Смбат Енокян в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2025/10 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	